ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2020Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 17-18-Ը ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**
   Արմեն Սիմոնյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**
   Ռուսաստանի Դաշնություն (Մոսկվա), 2020թ. հունվարի 17-ից 18-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   «Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ).**
   «Ռուսական երկաթուղիներ» ընկերության հետ երկկողմ համագործակցության հարցերը քննարկելու նպատակով:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
   Քննարկվել են Հայկական երկաթուղու համակարգը «Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ-ի կողմից ստեղծված «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ին փոխանցելու մասին Կոնցեսիոն պայմանագրով նախատեսվող ներդրումների ծավալների ավելացման հետ կապված հարցերը: Հստակեցվել են նշված ծավալները ապահովող աղբյուրները:
   Քննարկվել են նաև ընդհանուր երկաթուղային տրանսպորտի զարգացման հետ կապված հարցերը Հայաստանում:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**
   Այցի ընթացքում հանդիպում եմ ունեցել «Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ գլխավոր տնօրենի տեղակալ Վյաչեսլավ Պավլովսկիի հետ: Հանդիպման արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ ռուսական կողմը արձանագրություն կկազմի և կներկայացնի հայկական կողմին: Փոխադարձ համաձայնեցումից հետո այն կստորագրվի:

8. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**
   Այցի արդյունքերով փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**
   Շարունակական աշխատանքներ տանել ձեռք բերված պայմանավորվածությունների կատարման ուղղությամբ:

10. **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ**

21 հունվարի 2020թ.